ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/4

«20» ՄԱՅԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղուլունցը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Աստղիկ Ղարագյոզյանը
Նիստին մասնակցում էին Տեղ համայնքի ավագանու թվով 9 (ինը) անդամներ՝

1. Առաքելյան Վահե
2. Բաղդասարյան Նազիկ
3. Գալստյան Լարիսա
4. Դալլաքյան Արման
5. Ղուլունց Դավիթ
6. Ղուկասյան Արագած
7. Միրզոյան Արամ
8. Շեգունց Ռոմիկ
9. Սիմոնյան Լորա

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ, 62-րդ և 64-րդ հոդվածներով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի ութերորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 142-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

2.Տեղ համայնքի վարչական սահմաններում պետական կամ համայնքային հողամասերում քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական

գրանցումից հետո դրանք օտարելու և /կամ/ վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին.

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 06-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

4.Փոխադրամիջոցի հարկի արտոնություն սահմանելու մասին.

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 140-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

6.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագնու հերթական ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 142-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի Արցախի խճուղի թիվ 13/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Դավիթ Արամայիսի Ղուլունցին օտարելու մասին>> N 142-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴՐԱՆՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ /ԿԱՄ/ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդված 18-րդ կետով և 18-րդ հոդվածի 21-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն և «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշումներով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Թույլատրել Տեղ համայնքիղեկավարինհամայնք վարչականսահմաններում պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո ինքնակամկառույցը և առանձնացված հողամասը սահմանված կարգով և գներով օտարել ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով և /կամ/ տրամադրել օգտագործման վարձակալության իրավունքով:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի N 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 06-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 05-Ա որոշման հավելվածում կատարել լրացում և համայնքային սեփականության հանդիսացող գույքացանկում ներառել.

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքին՝ Միավորված ազգերի զարգացման ծրագրի կողմից նվիրաբերված հետևյալ գույքը.

Արևային կայանի հավաքածու (ներառյալ 10 կՎ արևային ֆոտովոլտային վահանակներ և 5 կՎ հզորությամբ կուտակիչ մարտկոց)՝ 2 հատ:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարողին ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հարկային օրենսգրքի» 245-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Սահմանել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն բնակավայրի 3-րդ փողոցի տուն 12 հասցեում հաշվառված Տոլիկ Սուրիկի Մարկոսյանին (ծնված 16.05.1987թ., ՀԾՀ՝ 2605870685) սեփականության իրավունքով իրեն պատկանող GAZ 24-10 մակնիշի (թողարկում՝ 1986թ., պետ. համարանիշ՝ 34VO553, ձիաուժ՝ 100) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 59 532 (հիսունինը հազար հինգ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2021-2025 թվականների փոխադրամիջոցի տարեկան գույքահարկի վճարումից:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 140-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 27-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 140-Ա որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՅ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական ութերորդ նստաշրջանի հինգերրորդ նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի հունիսի 20-ին:

Քվեարկեցին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստը ավարտվեց ժամը 11:20-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

_____ Առաքելյան Վահե

_____ Բաղդասարյան Նազիկ

_____ Լարիսա Գալստյան

_____ Դալլաքյան Արման

_____ Ղուլունց Դավիթ

_____ Ղուկասյան Արագած

_____ Միրզոյան Արամ

_____ Շեգունց Ռոմիկ

_____ Սիմոնյան Լորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ **ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ**